



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 503-Ա

10 ապրիլի 2023 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ 05-003-0168-0016 ԵՎ 05-003-0168-0017
ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ ԳՈՒՅՔԵՐԻ ՄԻԱՎՈՐՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑԱԾ
ԳՈՒՅՔԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. №2387-Ն որոշման 48-րդ կետի պահանջներով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի 05-003-0168-0016 և 05-003-0168-0017 կադաստրային ծածկագրերով Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Ի. Խաչատրյան փողոց, թիվ 75 հասցեի և Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Ի. Խաչատրյան փողոց, թիվ 73 հասցեի գույքերի միավորումից առաջացած նոր գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, քաղաք Մարտունի, Ի. Խաչատրյան փողոց, թիվ 73-75 հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ. ՀՈՎԵՅԱՆ

10 ապրիլի 2023 թվական
ք. Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 504-Ա

10 ապրիլի 2023 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿԻՉՆԵՐ ԱՆՆԱ
ԱՐԹՈՒՐԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԵՎ ԳԱԳԻԿ ԱՐԹՈՒՐԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ԻՐԵՆՑ ՀՈՐ՝
ԱՐԹՈՒՐ ԳՈՒՐԳԵՆԻ ՄԱՐԳԱՐՅԱՆԻ ՀԵՏ ՏԵՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՕՐ ԵՎ ԺԱՄԵՐ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Մարտունու համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 03.03.2023թվականին կազմած արձանագրությունը և ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշմամբ հաստատված «խնամակալության և հոգաբարձության մարմինների կանոնադրության», ՀՀ ընտանեկան օրենսգրքի 42, 54 և 56-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

- 1.Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Արթուր Գուրգենի Մարգարյանին՝ իր անչափահաս երեխաներ Աննա Արթուրի Մարգարյանի (ծնված՝ 19.11.2019 թվականին) և Գագիկ Արթուրի Մարգարյանի (ծնված՝ 06.09.2021 թվականին) հետ տեսակցության համար սահմանել հետևյալ կարգը՝ հայրը իրավունք ունի յուրաքանչյուր կիրակի օր ժամը 15:00-ից մինչև ժամը 19:00 տեսակցելու իր երեխաներին:
- 2.Պարտավորեցնել երեխաների մորը՝ Լիլիթ Վոսմի Մարգարյանին, խոչընդոտ չհանդիսանալ հոր հետ երեխաների տեսակցությանը:
3. Պարտավորեցնել երեխաների հորը՝ Արթուր Գուրգենի Մարգարյանին, երեխաների հետ տեսակցությունը կազմակերպել սույն որոշման 1-ին կետով սահմանված ժամանակացույցին համապատասխան:
- 4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՀՈՎԵՅԱՆ

10 ապրիլի 2023 թվական
ք.Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 505-Ա

10 ապրիլի 2023 թվական

ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 28 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԱՐՑԱՆԻ ՓՈՂՈՑ, 8-ՐԴ ՆՐՔԱՆՑՔ, ԹԻՎ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԹԻՎ 821-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների պահանջներով.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Մարտունի համայնքի ղեկավարի 28 նոյեմբերի 2022 թվականի «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Մարտունի քաղաքի Արցախի փողոց, 8-րդ նրբանցք թիվ 5 հասցեում գտնվող հողամասում ինքնական կառուցված շինությունները օրինականացնելու մասին» թիվ 821-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

- 1.1 Որոշման վերնագրում «8-րդ » թիվը փոփոխել «5-րդ» թվով,
 - 1.2 Որոշման վերնագրում « 5 » թիվը փոփոխել «8» թվով ,
 - 1.3 Որոշման 1-ին կետի «Արցախի փողոց, 8-րդ նրբանցք, թիվ 5 հասցեում» բառերը և թվերը փոփոխել «Արցախի փողոց, 5-րդ նրբանցք, թիվ 8 հասցեում» բառերով և թվերով:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրամարկմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ. ՀՈՎԵՅԱՆ

10 ապրիլի 2023 թվական
ք. Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 506-Ա

10 ապրիլի 2023 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 05-027-0090- ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ
ԾԱԾԿԱԳՐՈՎ 0.15 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽԱԺԱԿ ԽԱԶԻԿԻ
ՆԱԿԻԿՅԱՆԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով 04-ը հոկտեմբերի 2005 թվականի թիվ 199-Ն օրենքի պահանջով և
հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի դատարանի 19.04.2006
թվականի N 2-113 գործով կայացրած վճիռը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի
Գեղիովիտ բնակավայրի 05-027-0090- կադաստրային ծածկագրով Գեղիովիտ
բնակավայր, 5-րդ փողոց, թիվ 165/2 հասցեի անասնագոմի սպասարկման համար
հատկացված 0.15 հա մակերեսով հողամասի նկատմամբ ճանաչել Խաթակ Խաչիկի
Նավիկյանի օգտագործման իրավունքը, պայմանով, որ գույքի օտարման դեպքում
վճարվի հողամասի այդ պահին գործող կադաստրային արժեքը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող
օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ. ՀՈՎԵՅԱՆ

10 ապրիլի 2023 թվական
ք. Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 507-Ա

10 ապրիլի 2023 թվական

**«ԱՐՄԵՆ-ՎԱՀԱԳ» ՍՊԸ-ԻՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ԱՍՏՂԱԶՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ
ՍԵՂՄՎԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱՋԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարան մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և
հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 22.12.2022 թվականի N 241-Ն
որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. «Արմեն-Վահագ» ՍՊԸ-ին տալ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք,
Աստղաձոր բնակավայրում սեղմված բնական գազի վաճառքի թույլտվություն
2023 թվականի համար:
2. «Արմեն-Վահագ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության
տնօրենին՝ Մարտունու համայնքապետարանի 900145113065 հաշվի համարին
վճարել 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող
օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ. ՀՈՎԵՅԱՆ

10 ապրիլի 2023 թվական
ք. Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 508-Ա

10 ապրիլի 2023 թվական

«ՇՈՒՇԱՆ ԱՎԱԳՅԱՆ» ԱԶ-ԻՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔ, ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 17 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարան մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 22.12.2022 թվականի N 241-Ն որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. «Շուշան Ավագյան» ԱԶ-ին տալ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Մարտունի քաղաք, Մյասնիկյան փողոց, թիվ 17 հասցեում 5,55 քմ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվություն 2023 թվականի 1-ին, 2-րդ եռամսյակների համար:
2. «Շուշան Ավագյան» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին 25000 (քսանհինգ հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՀՈՎԵՅԱՆ

10 ապրիլի 2023 թվական
ք.Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 509-Ա

10 ապրիլի 2023 թվական

«ՇՈՒՇԱՆ ԱՎԱԳՅԱՆ» ԱԶ-ԻՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԿԻՍԱՄՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔ, ՄՅԱՍՆԻԿՅԱՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 17 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարան մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 22.12.2022 թվականի N 241-Ն որոշումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. «Շուշան Ավագյան» ԱԶ-ին տալ Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Մարտունի քաղաք, Մյասնիկյան փողոց, թիվ 17 հասցեում գործող 160քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2023 թվականի 1-ին կիսամյակի համար (թույլտվությունը կցվում է):
2. «Շուշան Ավագյան» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել 40000 (քառասուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնապես հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Հ. ՀՈՎԵՅԱՆ

10 ապրիլի 2023 թվական
ք.Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 510-Ա

10 ապրիլի 2023 թվական

**«ԳԱՐԻԿ ԳՈՒՐԳԵՆ» ՍՊԸ-ԻՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՎ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐԻ
ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱՄԱՅՆՔ, ԱՍՏՂԱԶՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ
ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ (ԿԱՄ) ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐՐԴԵՆԻԿԱՏԵՍԱԿՆԵՐԻ
ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարան մասին» Հայաստանի
Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք
ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 22.12.2022 թվականի N 241-Ն որոշումը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

- 1.«Գարիկ-Գուրգեն» ՍՊԸ-ին տալ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Աստղաձոր բնակավայր գործող 40 քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն 2023 թվականի 1-ին և 2-րդ եռամսյակների համար (թույլտվությունը կցվում է):
- 2.«Գարիկ-Գուրգեն» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145113065 հաշվի համարին վճարել 22000 (քսաներկու հազար) ՀՀ դրամ տեղական տուրք:
- 3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՀՈՎԵՅԱՆ

10 ապրիլի 2023 թվական
ք.Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 511-Ա

10 ապրիլի 2023 թվական

**«ԱՐՏՅՈՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ» ՍՊԸ-ԻՆ 2023 ԹՎԱԿԱՆԻ 1-ԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ,
ԱՍՏՂԱԾՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՈՐԾՈՂ ԱՌԵՎՏՐԻ ԿԵՏՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ
ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարան մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Մարտունի համայնքի ավագանու 22.12.2022 թվականի N 241-Ն որոշումը՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

- 1.«Արտյոմ Խաչատրյան» ՍՊԸ-ին տալ ՀՀ Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Աստղաձոր բնակավայր գործող 23քմ մակերեսով առևտրի կետում ոգելից խմիչքների վաճառքի թույլտվություն 2023 թվականի 1-ին եռամսյակի համար (թույլտվությունը կցվում է):
- 2.«Արտյոմ Խաչատրյան» անհատ ձեռնարկատիրոջը՝ Մարտունու համայնքապետարանի 900145113065 հաշվի համարին վճարել 4000 (չորս հազար) Հայաստանի Հանրապետության դրամ տեղական տուրք:
- 3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Հ. ՀՈՎԵՅԱՆ

10 ապրիլի 2023 թվական
ք.Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 512-Ա

11 ապրիլի 2023 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԳԵՂՀՈՎԻՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 1-ԻՆ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 105 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն որոշումը, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N2387-Ն որոշման 48-րդ կետը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Գեղիովիտ բնակավայրի բնակիչ Արամ Պատվելի Ազիզյանի 22.03.2023 թվականի դիմումն ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու վերաբերյալ՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Գեղիովիտ բնակավայրի 1-ին փողոց, թիվ 105 հասցեում գտնվող, Արամ Պատվելի Ազիզյանին (ծնված՝ 06.10.1978 թվականին) սեփականության իրավունքով պատկանող 05-027-0089-0010 կադաստրային ծածկագրով 0.12926 հա փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 513-Ա

11 ապրիլի 2023 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐԾՎԱՆԻՍՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 21-ՐԴ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՆՐՔԱՆՑՔ, ԹԻՎ
15 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն որոշումը, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N°2387-Ն որոշման 48-րդ կետը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Արծվանիստ բնակավայրի բնակիչ Մանվել Լիպարիտի Արևշատյանի դիմումը ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու վերաբերյալ՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Արծվանիստ բնակավայրի 21-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 15 հասցեում գտնվող, Մանվել Լիպարիտի Արևշատյանին (ծնված՝ 15.07.1955 թվականին), Գայանե Ներսեսի Արևշատյանին (ծնված՝ 11.07.1957 թվականին), Էլմիրա Մանվելի

Արևշատյանին (ծնված՝ 15.03.1979 թվականին), Էդգար Մանվելի Արևշատյանին (ծնված՝ 05.01.1981 թվականին) և Զորիկ Մանվելի Արևշատյանին (ծնված՝ 23.07.1983 թվականին) համատեղ սեփականության իրավունքով պատկանող 05-016-0022-0005 կադաստրային ծածկագրով 0.2782 հա փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 25.82 քմ արտաքին մակերեսով մառանի 1-ին հարկը (ներքին մակերեսը՝ 19.48 քմ, կառուցված՝ 2010 թվականին), 21.91 քմ արտաքին մակերեսով մառանի 2-րդ հարկը (ներքին մակերեսը՝ 21.91 քմ, կառուցված՝ 2010 թվականին) և 527.0 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը (ներքին մակերեսը՝ 497.27 քմ, կառուցված 2010 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝
մառանի 1-ին հարկի համար՝ $25.82 \times 6000 \times 0.0874 = 13540$ (տասներեք հազար հինգ հարյուր քառասուն) ՀՀ դրամ.
մառանի 2-րդ հարկի համար՝ $24.46 \times 6000 \times 0.0874 = 12827$ (տասներկու հազար ութ հարյուր քսանյոթ) ՀՀ դրամ.
անասնաշենքի համար՝ $527.0 \times 6000 \times 0.0874 = 276359$ (երկու հարյուր յոթանասունվեց հազար երեք հարյուր հիսունինը) ՀՀ դրամ.
ընդամենը՝ 302726 (երեք հարյուր երկու հազար յոթ հարյուր քսանվեց) ՀՀ դրամ:
3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների ծածկագիրն է՝ 2022TW4WLM):
5. Հատկացման չափից մինչև քսան տոկոս ավել օգտագործվող 0.0082 հա հողամասի նկատմամբ (փաստացի օգտագործվող մակերեսը՝ 0.2782 հա, գրանված մակերեսը՝ 0.27 հա), որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ճանաչել սույն որոշման 1-ին կետում նշված անձանց սեփականությունը:
6. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
7. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Արծվանիստ բնակավայր, 21-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 15 հասցեն:
8. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հ. ՀՈՎԵՅԱՆ

11 ապրիլի 2023 թվական
ք. Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 514-Ա

11 ապրիլի 2023 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ, ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ,
ԼԻՃՔ ԲՆԱԿԱՎԱՅՐ, Ա 3 ԹԱՂԱՄԱՍ, 8-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 20 ՀԱՍՑԵՈՒՄ ՎՈԱՄ
ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ 10.01.2018 ԹՎԱԿԱՆԻՆ ՏՐՎԱԾ ԹԻՎ 1 ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 19.03.2015 թվականի թիվ 596-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետի եզրակացությունը, Վոամ Կոստանյանի դիմումը և հաշվի առնելով, որ Վոամ Կոստանյանը չի կարողացել ավարտին հասցնել շինարարությունը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Լիճք բնակավայր, Ա 3 թաղամաս, 8-րդ փողոց, թիվ 20 հասցեում Վոամ Կոստանյանին 10.01.2018 թվականին տրված թիվ 1 շինարարության թույլտվության ժամկետը երկարաձգել 12 ամսով մինչև 11.04.2024 թվականը:
2. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Հակոբ Մնացականյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ. ՀՈՎԵՅԱՆ

11 ապրիլի 2023 թվական
ք. Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 515-Ա

11 ապրիլի 2023 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԵՐՔԻՆ ՏԱՓ ԹԱՂԱՄԱՍԻ 7-ՐԴ
ՓՈՂՈՑ, ԹԻՎ 9 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ
ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, հիմք ընդունելով «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշումը, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. №2387-Ն որոշման 48-րդ կետը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Արթուր Ռաֆիկի Հովհաննիսյանի 16.03.2023 թվականի դիմումն ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու վերաբերյալ՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Ներքին տափ թաղամասի 7-րդ փողոց, թիվ 9 հասցեում գտնվող, Արթուր Ռաֆիկի Հովհաննիսյանին (ծնված՝ 12.02.1961 թվականին), Նունե Թաթույի Հայրապետյանին (ծնված՝ 12.03.1970 թվականին) և Տաթև Արթուրի Հովհաննիսյանին (ծնված՝ 06.01.1993 թվականին) համատեղ սեփականության իրավունքով պատկանող 05-066-0116-0046 կադաստրային ծածկագրով 0.23991 հա փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 43.75 քմ արտաքին մակերեսով նկուղը (ներքին մակերեսը՝ 31.5 քմ, կառուցված՝ 1992 թվականին) և 117.29 քմ արտաքին

- մակերեսով բնակելի տունը (ներքին մակերեսը՝ 96.04 քմ, կառուցված՝ 1992 թվականին) ճանաչել օրինական:
2. Նկատի ունենալով, որ շինությունները կառուցվել են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը՝ օրինականացման համար վճար չգանձել:
 3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
 4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների ծածկագիրն է՝ 2023ZBTBM9):
 5. Հատկացման չափից մինչև քսան տոկոս ավել օգտագործվող 0.00091 հա հողամասի նկատմամբ (փաստացի օգտագործվող մակերեսը՝ 0.23991 հա, գրանված մակերեսը՝ 0.239 հա), որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ճանաչել սույն որոշման 1-ին կետում նշված անձանց սեփականությունը:
 6. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Ներքին տափ թաղամաս, 7-րդ փողոց, թիվ 9 հասցեն:
 7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
 8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՀՈՎԵՅԱՆ

11 ապրիլի 2023 թվական
ք. Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 516-Ա

11 ապրիլի 2023 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԿԱՐԵՆ ՇԱԼԻԿՈՎԻ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ 02.06.2018 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԾՈՎԱՍԱՐ
ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 120.0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԱՐՈՏԱՎԱՅՐԻ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Կարեն Մարտիրոսյանի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար բնակավայրի բնակիչ Կարեն Մարտիրոսյանի հետ 02.06.2018 թվականին կնքված Ծովասար բնակավայրում գտնվող 120.0 հա մակերեսով արոտավայրից օգտվելու մասին պայմանագրի ժամկետը երկարաձգել 3 տարով մինչև 2026 թվականի ապրիլի 11-ը:
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հարություն Հարությունյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ. ՀՈՎԵՅԱՆ

11 ապրիլի 2023 թվական
ք.Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 517-Ա

11 ապրիլի 2023 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԿԱՐԵՆ ՇԱԼԻԿՈՎԻ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ 29.09.2022 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԾՈՎԱՍԱՐ
ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 48.0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԽՈՏՀԱՐՔԻ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Կարեն Մարտիրոսյանի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար բնակավայրի բնակիչ Կարեն Մարտիրոսյանի հետ 29.09.2022 թվականին կնքված Ծովասար բնակավայրում գտնվող 48.0 հա մակերեսով խոտհարքից օգտվելու մասին պայմանագրի ժամկետը երկարաձգել 3 տարով մինչև 2026 թվականի ապրիլի 11-ը:
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հարություն Հարությունյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հ. ՀՈՎԵՅԱՆ

11 ապրիլի 2023 թվական
ք.Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 518-Ա

11 ապրիլի 2023 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՀԱԿՈՔ ՇԱԼԻԿՈՅԻ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ 29.09.2022 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԾՈՎԱՍԱՐ
ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 48.0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԽՈՏՀԱՐՔԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Հակոբ Մարտիրոսյանի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար բնակավայրի բնակիչ Հակոբ Մարտիրոսյանի հետ 29.09.2022 թվականին կնքված Ծովասար բնակավայրում գտնվող 48.0 հա մակերեսով խոտհարքից օգտվելու մասին պայմանագրի ժամկետը երկարաձգել 3 տարով մինչև 2026 թվականի ապրիլի 11-ը:
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հարություն Հարությունյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ. ՀՈՎԵՅԱՆ

11 ապրիլի 2023 թվական
ք. Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 519-Ա

11 ապրիլի 2023 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԽԱՉԻԿ ՌԱՖԻԿԻ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻ ՀԵՏ 29.09.2022 ԹՎԱԿԱՆԻՆ ԿՆՔՎԱԾ ԾՈՎԱՍԱՐ
ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 10.0 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԽՈՏՀԱՐՔԻ
ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱԶԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով ՀՀ Հողային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով Խաչիկ Մարտիրոսյանի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար բնակավայրի բնակիչ Խաչիկ Մարտիրոսյանի հետ 29.09.2022 թվականին կնքված Ծովասար բնակավայրում գտնվող 10.0 հա մակերեսով խոտհարքից օգտվելու մասին պայմանագրի ժամկետը երկարաձգել 3 տարով մինչև 2026 թվականի ապրիլի 11-ը:
2. Որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Հարություն Հարությունյանի վրա:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հ. ՀՈՎԵՅԱՆ

11 ապրիլի 2023 թվական
ք.Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 520-Ա

11 ապրիլի 2023 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ՓՈՂՈՑ ԹԻՎ 28 ՀԱՍՑԵԻ
ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՃՇԳՐՏՄԱՆ ԵՎ ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ
ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով Վասակ Բարեղամյանի 10.04.2023 թվականի թիվ 1964 դիմումը, «Կարեն Սարիբեկյան» ԱԶ-ի կողմից կատարված չափագրությունը, հաշվի առնելով, որ Վասակ Բարեղամյանի կողմից որևէ սահմանի խախտում տեղի չի ունեցել, թիվ 2588333 սեփականության իրավունքի վկայականում և հողհատկացման հատակագծում առկա հողամասի երկրաչափական պատկերը համապատասխանում է փաստացի իրավիճակին, սակայն առկա է գծային չափերի անհամապատասխանություն, որի արդյունքում հողամասի մակերեսը փաստացի 0,52379 հա-ի փոխարեն գրվել է 0,5203 հա և ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 64-րդ հոդվածի 8-րդ կետի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության 04-ը հոկտեմբերի 2005 թվականի 199-Ն օրենքի 23-րդ հոդվածի պահանջներով և հաշվի առնելով այն փաստը, որ 0,00349 հա հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության «Հողային օրենսգրքի» 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Վասակ Արշամի Բարեղամյանին և Գոհար Վալոդի Բարսեղյանին պատկանող քաղաք Մարտունի, Երևանյան փողոց, թիվ 28 հասցեում գտնվող հասարակական գործառնական նշանակության հողամասի սեփականության վկայականում կատարել հողամասի մակերեսի ուղղում՝ 0.5203 հա-ն փոփոխել 0.52379 հա-ի:

2. Վասակ Արշամի Բարեղամյանին՝ համայնքապետարանի 900145101060 հաշվի համարին վճարել ավել օգտագործվող 34.9 քմ հողամասի կադաստրային արժեքը, որը կազմում է 155019 (մեկ հարյուր հիսունհինգ հազար տասնինը) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝



Հ. ՀՈՎԵՅԱՆ

11 ապրիլի 2023 թվական
ք. Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 521-Ա

11 ապրիլի 2023 թվական

**ԼԱԵՐՏ ԼՅՈՒԴՎԻԿԻ ՀՈՎՆԻԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 26-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով վարչական իրավախախտման վերաբերյալ 03.04.2023 թվականի թիվ 11 արձանագրությունը, Մարտունու համայնքապետարանի վարչական իրավախախտումների հարցերով հանձնաժողովի 10.04.2023 թվականի թիվ 05 արձանագրությունը, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով հարուցված, Մարտունու համայնքապետարանում իրականացված վարչական վարույթի ընթացքում բացահայտված գործի բոլոր հանգամանքները, հաստատված համարելով Լաերտ Լյուդվիկի Հովնիկյանի կողմից Ներքին Գետաշեն բնակավայր, Վերին Դեմեր թաղամաս, 1-ին փողոց, թիվ 61/1 հասցեում իր սեփականությունը հանդիսացող հողամասի վրա ինքնակամ շինություն կառուցելու փաստը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Վերին Դեմեր թաղամաս, 1-ին փողոց, թիվ 61/1 հասցեում գտնվող, իրեն սեփականության իրավունքով պատկանող հողամասի վրա ինքնակամ շինություն կառուցելու համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 154-րդ հոդվածի 2-րդ մասի հիմքով Լաերտ Լյուդվիկի Հովնիկյանի նկատմամբ նշանակել վարչական տուգանք 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամի չափով:
2. Լաերտ Լյուդվիկի Հովնիկյանին՝ 100 000 (հարյուր հազար) ՀՀ դրամ տուգանքը 15-օրյա ժամկետում վճարել Մարտունու համայնքապետարանի 900145109055 հաշվի համարին:
3. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքապետարանի աշխատակազմի իրավաբանական բաժնի գլխավոր մասնագետի պարտականությունները կատարող Զավիկ Խաչատրյանի վրա:
5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Լաերտ Լյուդվիկի Հովնիկյանին որոշման ընդունման մասին իրազեկմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ



Հ. ՀՈՎԵՅԱՆ

11 ապրիլի 2023 թվական
ք. Մարտունի



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 522-Ա

11 ապրիլի 2023 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱՍԱՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 3-ՐԴ ՓՈՂՈՑ, 2-ՐԴ ՆՐԲԱՆՑՔ, ԹԻՎ 12
ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 05-036-0034-0008 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ
ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն որոշումը, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N2387-Ն որոշման 48-րդ կետը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Ծովասար բնակավայրի բնակիչ Սերյոժա Անդրանիկի Մովսիսյանի 23.03.2023 թվականի դիմումն ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու վերաբերյալ՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ծովասար բնակավայրի 3-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 12 հասցեում գտնվող, Սերյոժա Անդրանիկի Մովսիսյանին (ծնված՝ 15.05.1956 թվականին), Մարո Ռոմանի

Մովսիսյանին (ծնված՝ 01.01.1959 թվականին), Սմբատ Սերյոժայի Մովսիսյանին (ծնված՝ 30.09.1980 թվականին), Էդվարդ Սերյոժայի Մովսիսյանին (ծնված՝ 10.07.1983 թվականին) և Հասմիկ Սերյոժայի Զաքարյանին (ծնված՝ 17.09.1988 թվականին, հողամասի սեփականության իրավունքի գրանցման վկայականում ազգանունը՝ Մովսիսյան) համատեղ սեփականության իրավունքով պատկանող 05-036-0034-0008 կադաստրային ծածկագրով 0.1060 հա փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 140.31 քմ արտաքին մակերեսով բնակելի տան 1-ին հարկը (ներքին մակերեսը՝ 112.42 քմ, կառուցված՝ 2008 թվականին), 140.31 քմ արտաքին մակերեսով բնակելի տան 2-րդ հարկը (ներքին մակերեսը՝ 108.59 քմ, կառուցված՝ 2008 թվականին), 85.15 քմ արտաքին մակերեսով մանսարդը (ներքին մակերեսը՝ 81.47 քմ, կառուցված՝ 2008 թվականին) և 2.7 քմ արտաքին մակերեսով զուգարանը (ներքին մակերեսը՝ 1.54 քմ, կառուցված 2008 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝
բնակելի տան 1-ին հարկի համար՝ $140.31 \times 10000 \times 0.0874 = 122631$ (հարյուր քսաներկու հազար վեց հարյուր երեսունմեկ) ՀՀ դրամ.
բնակելի տան 2-րդ հարկի համար՝ $140.31 \times 10000 \times 0.0874 = 122631$ (հարյուր քսաներկու հազար վեց հարյուր երեսունմեկ) ՀՀ դրամ.
մանսարդի համար՝ $85.15 \times 10000 \times 0.0874 = 74422$ (յոթանասունչորս հազար չորս հարյուր քսաներկու) ՀՀ դրամ.
զուգարանի համար՝ $2.7 \times 6000 \times 0.0874 = 1416$ (հազար չորս հարյուր տասնվեց) ՀՀ դրամ.

ընդամենը՝ 321100 (երեք հարյուր քսանմեկ հազար հարյուր) ՀՀ դրամ:

3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների ծածկագիրն է՝ 20239X73BV):
5. Հատկացման չափից մինչև քսան տոկոս ավել օգտագործվող 0.006 հա հողամասի նկատմամբ (փաստացի օգտագործվող մակերեսը՝ 0.1060 հա, գրանված մակերեսը՝ 0.10 հա), որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ճանաչել սույն որոշման 1-ին կետում նշված անձանց սեփականությունը:
6. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
7. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ծովասար բնակավայր, 3-րդ փողոց, 2-րդ նրբանցք, թիվ 12 հասցեն:
8. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները պետք է գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնապես հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐՈՒՄ

Հ. ՀՈՎԵՅԱՆ

11 ապրիլի 2023 թվական

ք. Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 523-Ա

11 ապրիլի 2023 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՆԵՐՔԻՆ ԴՈՒՐԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ
7-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 27 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ, 05-066-0116-0026 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ
ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ
ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն որոշումը, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N2387-Ն որոշման 48-րդ կետը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Ներքին Գետաշեն բնակավայրի բնակիչ Աշոտ Գալուստի Գրիգորյանի 27.03.2023 թվականի դիմումն ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու վերաբերյալ՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Ներքին Գետաշեն բնակավայրի Ներքին Դուրան թաղամասի 7-րդ փողոց, թիվ 27 հասցեում գտնվող, Աշոտ Գալուստի Գրիգորյանին (ծնված՝ 01.02.1951 թվականին),

Աիդա Գորգինի Գրիգորյանին (ծնված՝ 19.06.1958 թվականին), Անի Աշոտի Գրիգորյանին (ծնված՝ 25.12.1978 թվականին), Վահե Աշոտի Գրիգորյանին (ծնված՝ 16.08.1985 թվականին) և Նարեկ Աշոտի Գրիգորյանին (ծնված՝ 19.09.1990 թվականին) բաժնային սեփականության իրավունքով պատկանող 05-066-0116-0026 կադաստրային ծածկագրով 0.19946 հա փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 180.32 քմ արտաքին մակերեսով նկուղը և բնակելի տունը (նկուղի ներքին մակերեսը՝ 52.69 քմ, կառուցված՝ 2019 թվականին, բնակելի տան ներքին մակերեսը՝ 94.40 քմ, կառուցված) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝
 $180.32 \times 10000 \times 0.1028 = 185369$ (հարյուր ութսունհինգ հազար երեք հարյուր վաթսունինը) ՀՀ դրամ:
3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների ծածկագիրն է՝ 2023NW6YPR):
5. Հատկացման չափից մինչև քսան տոկոս ավել օգտագործվող 0.00046 հա հողամասի նկատմամբ (փաստացի օգտագործվող մակերեսը՝ 0.19946 հա, գրանված մակերեսը՝ 0.199 հա), որը չի գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ճանաչել սույն որոշման 1-ին կետում նշված անձանց սեփականությունը:
6. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
7. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Ներքին Գետաշեն բնակավայր, Ներքին Դուրան թաղամաս, 7-րդ փողոց, թիվ 27 հասցեն:
8. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
9. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՀՈՎԵՅԱՆ

11 ապրիլի 2023 թվական

ք. Մարտունի





**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 524-Ա

11 ապրիլի 2023 թվական

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ
ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 32-ՐԴ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 14 ՀԱՍՑԵՈՒՄ
ԳՏՆՎՈՂ, 05-085-0012-0007 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ
ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԾԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի դրույթներով, 16.12.2021 թվականի ՀՕ-397-Ն օրենքի 2-րդ հոդվածի 2-րդ մասով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմք ընդունելով «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի թիվ 912-Ն որոշումը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N1023-Ն որոշումը, ՀՀ Կառավարության 29.12.2005թ. N2387-Ն որոշման 48-րդ կետը, նկատի ունենալով, որ կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, ինչպես նաև հիմք ընդունելով Վարդենիկ բնակավայրի բնակիչ Ռոբերտ Երեմի Սևոյանի 03.04.2023 թվականի դիմումն ինքնակամ կառուցված շինություններն օրինականացնելու վերաբերյալ՝

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքի Վարդենիկ բնակավայրի 32-րդ փողոց, թիվ 14 հասցեում գտնվող, Ռոբերտ Երեմի Սևոյանին (ծնված՝ 05.11.1956 թվականին), Հերմինե Գևորգի Սևոյանին (ծնված՝ 10.01.1958 թվականին) և Արմեն Ռոբերտի Սևոյանին (ծնված՝ 06.05.1982 թվականին) համատեղ սեփականության իրավունքով պատկանող 05-085-0012-0007

կադաստրային ծածկագրով 0.122 հա փաստացի օգտագործվող բնակելի կառուցապատման հողամասի վրա ինքնակամ կառուցված 51.75 քմ արտաքին մակերեսով անասնաշենքը (ներքին մակերեսը՝ 40.09 քմ, կառուցված՝ 2017 թվականին) և 51.3 քմ արտաքին մակերեսով մանսարդը (ներքին մակերեսը՝ 42.84 քմ, կառուցված՝ 2017 թվականին) ճանաչել օրինական:

2. Ինքնակամ կառույցների օրինականացման վճարը կազմում է՝
անասնաշենքի համար՝ $51.75 \times 60000 \times 0.0874 = 27138$ (քսանյոթ հազար հարյուր երեսունութ) ՀՀ դրամ.
մանսարդի համար՝ $51.3 \times 60000 \times 0.0874 = 26902$ (քսանվեց հազար ինը հարյուր երկու) ՀՀ դրամ.
ընդամենը՝ 54040 (հիսունչորս հազար հարյուր քառասուն) ՀՀ դրամ:
3. Օրինականացման համար հիմք ընդունել լիցենզավորված չափագրողի կողմից ներկայացված հատակագիծը:
4. Առկա է Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից տրամադրված հաշվառման (չափագրման) տվյալների մուտքագրման տեղեկանքը (չափագրման տվյալների ծածկագիրն է՝ 2023SDQFLF):
5. Սույն որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարել ուժը կորցրած:
6. Անշարժ գույքերին տրամադրել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Վարդենիկ բնակավայր, 32-րդ փողոց, թիվ 14 հասցեն:
7. Սույն որոշումից բխող գույքային իրավունքները ենթակա են գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի կողմից:
8. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ. ՀՈՎԵՅԱՆ

11 ապրիլի 2023 թվական
ք. Մարտունի





ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱԴԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ

N 525-Ա

12 ապրիլի 2023 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔ, ԱՍՏՂԱԾՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐ, ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏԻԿՆԵՐԻ ՓՈՂՈՑ, ԹԻՎ 41 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-013-0002-0011 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՈՒՅՔԻ ԲԱԺԱՆՈՒՄԻՑ ԱՌԱՋԱՑՈՂ 0,0728 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՎ 0,1044 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԳՈՒՅՔԵՐԻՆ ՆՈՐ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ կետի 2-րդ ենթակետի 33-րդ կետը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնք, Աստղաձոր բնակավայր, Արցախյան Ազատամարտիկների փողոց, թիվ 41 հասցեում գտնվող 05-013-0002-0011 կադաստրային ծածկագրով գույքի բաժանումից առաջացող անշարժ գույքերին տրամադրել հետևյալ հասցեները.

0,0728 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Աստղաձոր բնակավայր, Արցախյան Ազատամարտիկների փողոց, թիվ 41/1 հասցեն,

0,1044 հա մակերեսով գույքին՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզ, Մարտունի համայնք, Աստղաձոր բնակավայր, Արցախյան Ազատամարտիկների փողոց, թիվ 41/2 հասցեն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնապես հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

Հ. ՀՈՎԵՅԱՆ

12 ապրիլի 2023 թվական
ք. Մարտունի



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՄԱՐՏՈՒՆՈՒ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՐՈՇՈՒՄ**

N 526-Ա

12 ապրիլի 2023 թվական

**ՋՈՆԻԿ ՄՆԱՅԱԿԱՆԻ ՍԻՐԱԿԱՆՅԱՆԻՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության Կառավարության 19.03.2015 թվականի N596-Ն որոշման, Մարտունի համայնքի ավագանու 22.12.2022 թվականի թիվ 241-Ն որոշման պահանջներով և հիմք ընդունելով Ջոնիկ Սիրականյանի դիմումը.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ե Մ՝

